ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

ԹԵՄԱ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Կազմեց՝ Ղազարյան Սուսաննա

(անուն, ազգանուն,)

Սյունիքի միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

<Կապանի N2 ավագ դպրոց>ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ I. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 5

1.1. Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի ընդհանուր բնութագիրը 5

1.2 Համագործակցային ուսուցման մեթոդների դերը ուսուցման Գործընթացում10

ԳԼՈՒԽ II. ՍՈՑՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԱՄՓՈՓՈՒՄ 13

2.1 Համագործակցային ուսուցման իրականացումը դպրոցում 20

2.2 Սոցիարցումների իրականացում և վերլուծություն 26

Եզրակացություն 28

Գրականության ցանկ 30

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Հանրակրթական դպրոցում համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կա անհրաժեշտություն ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կբարձրացնեն կրթության արդյունավետությունը և որակը:

Պատմության ընթացքում հայ ժողովուրդը բարձր է գնահատել դպրոցի և հատկապես ուսուցչի դերը: Հայ ուսուցիչը դարեր ի վեր եղել է բարձրագույն իդեալների կրողը, ազգային ինքնության ու արժեքների պահպանման առաջամարտիկը: Այսօր Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումներն էլ ավելի են կարևորում ուսուցչի դերը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթցում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: 21-րդ դարաշեմին ազգային դպրոցներ պետք է մուտք գործեն կրթական խնդիրների լուծմանն ուղղված մանկավարժական տարբեր տեխնոլոգիաներ և ուսուցման բազմաթիվ մեթոդներ: Ժամանակակից ազգային դպրոցի ուսուցիչը ուսումնառության ընթացքում պետք է օգտագործի զանազան համագործակցային մեթոդներ, որոնք ապահովում են արդյունավետ աշակերտակենտրոն ուսուցումը, առանձնաշերտում են աշակերտի համագործակցային կարողությունները, բարձրացնում ուսուցման շարժառիթները: Ժամանակակից պահանջներից է նաև ուսուցման գործընթացը իրական կյանքին մոտեցնելը:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել համագործակցային տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը հայոց լեզու և գրականության առարկայի ուսուցման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են.

- Ուսումնասիրել և վերլուծել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի վերաբերյալ տեսական մոտեցումները:
- Բացահայտել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի դերը ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման գործում :
- Իրականացնել սոցհարցումներ բացահայտելու ուսուցիչների, սովորողների վերաբերմունքը ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման վերաբերյալ :
- Մշակել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման դասի նմուշ օրինակներ :

ԳԼՈՒԽ I. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի ընդհանուր բնութագիրը

Մեր օրերում կրթական համակարգը լուրջ փոփոխություններ է ապրում և այդ որակական բարեփոխումը նոր մոտեցումներ է պահանջում: 21-րդ դարը մարդկության առջև նոր խնդիրներ է դնում, որոնք հնարավոր կլինի լուծել աճող սերնդին որակապես նոր կրթություն տալու դեպքում: Հանրակրթական դպրոցը հանդիսանում է այն կարևոր օղակը, որտեղ ձևավորվում է անձի անհատականությունը, բնավորության գծերը, կամային որակները, արժեհամակարգը և այլն: Գիտելիքներից բացի աշակերտին անհրաժեշտ է տալ նաև դրանք կիրառելու իրական կարողություններ ու հմտություններ՝ ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ, ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները: Ըստ Հ. Գարդների տեսության, ուսուցման ընթացքում թե ուսուցիչը, թե՛ աշակերտը փոխգործուն հարաբերությունների մեջ են, այսինքն՝ ընդունված սուբյեկտ-օբյեկտ գծապատկերին փոխարինում է սուբյեկտ-սուբյեկտ ժամանակակից գծապատկերը[6,էջ11]: Մանկավարժության տեսության մեջ ձևավորվել են ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստող մի շարք տեխնոլոգիաներ, որոնք նորարարական են և ուղղված են անձի ձևավորմանը: Մանկավարժական տեխնոլոգիան դասավանդողի գործողությունների հաջորդական համակարգն է, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է: Տեխնոլոգիան հուներեն բառ է, որ նշանակում է գիտություն արվեստի և վարպետության մասին: Այս կամ այն տեխնոլոգիայի կիրառումը վկայում է ուսուցչի ստեղծագործական մոտեցման մասին: Մերօրյա դպրոցում ուսուցիչը գործ ունի ոչ սովորական երեխաների հետ: Այսօր նրանցից յուրաքանչյուրը անհատականություն է իր ընկալումներով ու աշխարհայացքով: Ուստի բավական չէ նրանց միայն կրթել և դաստիարակել, պետք է նաև հարգել ու գնահատել:

Ժամանակակից ուսուցչի մասնագիտական հիմնական գործառույթներն են մանկավարժական աջակցություն, ուղղորդում և համագործակցություն յուրաքանչյուր աշակերտին: Եթե ուսուցիչը կիրառում կամ աշխատում է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիայով, ուրեմն ապահովում է աշակերտի ճանաչողական գործընթացը: Համագործակցային ուսուցման կիրառման պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակներից: Այս տեխնոլոգիայի ծագման, զարգացման հիմքում ինովացիոն գործընթացներ են, որոնք դիտարկել են մի շարք մանկավարժներ՝Կ.Դ. Ուշինսկին,Ն.Պ. Պիրոգովը, Լ.Ն.Տոլստոյը, Հ. Հինդիլյանը և ուրիշներ: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ըստ կիրառման եղանակի ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներն են,որի պատճառով էլ այստեխնոլոգիան ունի կիրառման լայն շրջանակ:

- գրեթե բոլոր ուսումնական առարկաների դասաժամերին ՝ լեզվի, գրականության, օտար լեզուներ, տեխնոլոգիա, ինֆորմատիկա, կերպարվեստ, մաթեմատիկա և այլն,
- կրթական բոլոր աստիճաններում ՝ սկսած նախադպրոցական կրթությունից մինչև ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացները,
- այն նաև դաստիարակության տեխնոլոգիա է , հաջողությամբ կիրառվում է արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում, դպրոց-ընտանիք փոխգործակցության համատեքստում [2, էջ 148]:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են երեք տեսություններ՝սոցիալական փոխկախվածության, ճանաչողական զարգացման, վարքագծային ուսումնառության[13].

Սոցիալական փոխկախվածության տեսության ներկայացուցիչների (Կուրտ Կաֆկա, Կուրտ Լեվին) խումբը համագործակցային ուսուցումը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության, իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը: Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու հայացքները: Ըստ Վիգոտսկու մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը

բացատրելն է, իսկ Ջ. Բրունները մշակեց հետևողական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում- դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝հիմնվելով ոչ թե ինչ սովորելու, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը դրդապատճառ է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ քայլերի:Պատասխանելով պարզ և հեշտ մի քանի հարցերի՝աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:Խմբում սոցիալական- փոխկախվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու, կամ նորարարություն իրականացնելու համար: Համագործակցային ուսուցումը՝որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:
- առաջադրանքների կատարմանը և այլն:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

- անձի զարգացումը և նրա անհատականության ձևավորումը,
- երեխաների հոգեբանական և ֆիզիկական առաղջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարման ունակություն,
- շրջապատի հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը,
- միջանձնային հարաբերություններ կառուցելու կարողության ձևավորումը,
- ընկերության և փոխօգնության, փոխադարձ պատասխանատվության համոզմունքի ձևավորումը,
- համագործակցային և խմբային աշխատանք իրականացնելու կարողության ձևավորումը:

ՈՒսուցման գործընթացում համագործակցային ուսուցման արդյունավետ իրացման կարևոր նախապայմանը համագործակցային ուսուցման տարրերի հաշվառումն է: Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար, ինչպես նաև ապահովում է ռեֆլեքսիան և բարելավում է խմբային աշխատանքը: Համագործակցային ուսուցման տարրերն են.

Դրական փոխկախվածություն. Համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկախվածության ապահովումը: Փոխկախվածություն կարող է առաջանալ երեք տարբեր ձևերով

1. Մրցակցային. երբ խմբի անդամները ուսուցման նպատակներին հասնելու համար մրցում են միմյանց հետ:
2. Անհատական. երբ խմբի անդամները առկախվում են խմբակիցներից և յուրաքանչյուր աշակերտ կատարում է իր անհատական առաջադրանքը:
3. Համագործակցային. երբ խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Դրական փոխկախվածությունը այն զգացումն է , որ խմբի յուրաքանչյուր անդամ կապված է խմբի մյուս անդամների հետ այնպես, որ չի կարող հաջողության

հասնել միայնակ: Կարելի է ասել, որ դրական փոխկախվածությունը համագործակցային ուսուցման <<սիրտն>> է:

Դեմառդեմ փոխազդեցություն. Երբ խմբերում ստեղծվել է դրական փոխկախվածություն, անհրաժեշտ է առավելագույնի հասցնել աշակերտների կողմից միմյանց սատարելու գործոնը:Այս դեպքում խմբի անդամները աշխատում են դեմ-դիմաց և տեսնում են միմյանց :

Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Համագործակցային ուսուցման նախապայմաններից մեկն այն է , որ սովորողը հաշվետու է իր և յուրաքանչյուր անդամի համար: Անհատական հաշվետվությունն ու պատասխանատվությունն առկա են, երբ առանձին գնահատվում է յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը:Անհատական հաշվետվությունն ու պատասխանատվությունը համագործակցային ուսուցման կայացման անհրաժեշտ պայմաններից են:

Սոցիալական համագործակցային խմբեր. Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտները անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Աշակերտների մոտ համագործակցային հմտությունների ձևավորման նպատակով ուսուցչի տրամադրած ժամանակն ու գործադրած ջանքերը կախված են աշակերտների նախնական պատրաստվածության աստիճանից: Սոցիալական հմտությունները ըստ համագործակցային ուսուցման լինում են չորս մակարդակների՝ ձևավորում, գործունեություն, ձևակերպում, խմորում:

Խմբային գործընթաց/ մշակում/. Խմբային գործընթացը (group processing) կապված էխմբային համագործակցության բարելավման հետ: Խմբային գործընթացը այն գործողությունների հաջորդականությունն է , որոնք կատարվում են կոնկրետ ժամանակահատվածում, կոնկրետ նպատակի հասնելու համար: Խմբային աշխատանքի ավարտից հետո կատարվում է միասնական քննարկում: Բոլոր խմբերում թե՛ փոքր, թե՛ մեծ խմբային գործընթացը ներառում է հետևյալ բաղադրիչները.

- Հետադարձ կապ
- Անդրադարձ/ քննարկում
- Բարելավման նպատակներ/ պլանավորման բարելավում
- Հաղթանակի տոնում

Համագործակցային ուսումնառության տեսության ժամանակակից ներկայացուցիչ, Հելսինկիի համալսարանի պրոֆեսոր Պասի Սահլբերգը (20-րդ վերջ) կարևորելով վերը նշվածները ավելացրել է համագործակցային ուսուցման ևս մեկ տարր՝ փոխներգործուն (ինտերակտիվ) կառուցվածք ունեցող առաջադրանք: Փոխներգործուն առաջադրանք. Փոխներգործուն է կոչվում այն առաջադրանքը, որը կատարելու համար պահանջվում է թիմային աշխատանք: Փոխներգործուն ուսուցմամն առաջադրանքի ամենակարևոր չափանիշն այն է, որ խմբի յուրաքանչյուր անդամ կարողանա հեշտությամբ մասնակցել առաջադրանքի կատարմանը: Փոխներգործուն առաջադրանքի կատարման համար հաճախ պահանջվում են տարբեր տեսակետներ, կարծիքներ և գաղափարներ: Համագործակցային ուսուցումը առավել արդյունավետ է, երբ առաջադրանքները ներառում են համագործակցային ուսուցման տարրերը: Փոխներգործուն առաջադրանքի դեպքում յուրաքանչյուրը գիտի առաջադրանքի մասին որևէ բան, սակայն ոչ ոք դրա մասին չգիտի ամեն ինչ: Ուսուցիչը չպետք է աշակերտին մատուցի այնպիսի նյութ, որը որևէ մարտահրավեր չի պարունակում իր մեջ, այլ գտնի այնպիսի առաջադրանքներ, որոնք լուրջ մարտահարավեր են ամբողջ խմբի համար, ստիպում են մտածել առաջադրանքի կատարման համար:[8,էջ29]: Համագործակցային ուսուցումը կազմակերպելու համար նախ և առաջ դասարանը պետք է բաժանվի խմբերի: Առանձնացվում համագործակցային ուսուցման խմբերի հետևյալ տեսակները.

Համագործակցային ֆորմալ խումբ- Համագործակցային ուսուցման խմբերը փոքր են՝ երկուսից չորս անդամ: Խմբում ընդգրկված անդամները առաջադրանքի կատարման համար աշխատում են մեկ դասաժամից մինչև մի քանի շաբաթ: Յուրաքանչյուր աշակերտ իր առջև ունի պարտականություն. Խմբի յուրաքանչյուր անդամի ուսուցման արդյունավետությունը հասցնել առավելագույնի: Ամեն մի առաջադրանք պետք է ունենա նպատակ: Նախքան ուսուցման գործընթացին անցնելը որոշվում է, թե խումբը քանի աշակերտ է ընդգրկում:

Խմբի անդամներից մեկը ներկայացնում է կատարված աշխատանքի արդյունքները:

Աշակերտները պետք է ուշադիր լսեն ներկայացված նյութը և հարցեր տան:

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է կատարած աշխատանքների հաշվետվություն: Համագործակցային ոչ ֆորմալ խմբեր- ժամանակավոր գործող խմբեր են, որի անդամները միասին աշխատում են մեկ քննարկման կամ մեկ դասաժամի ընթացքում: Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը հաճախ այնպես են ձևավորվում, որ կարողանում են արագորեն մասնակցել երեքից հինգ րոպե տևողությամբ քննարկումներին: Ուսուցիչը պետք է կազմակերպի ներածական քննարկումներ, խմբային քննարկումներ և ամփոփի այդ քննարկումները: Ուսուցման ընթացքում ուսուցչի մոտ դժվարություն է առաջանում աշակերտների կողմից նյութի ճիշտ մատուցումը, բացատրությունը: Այս դժվարությունները հաղթահարելու համար ուսուցիչը կարող է հանդես գալ ուղղորդողի դերում, որն էլ բարենպաստ է անդրադառնում արդեն նախապատրաստված ընթացի վրա:

Հենակետային համագործակցային խմբեր- Այս խմբերը երկարաժամկետ են և ապահովում են երկարատև, հոգատար փոխհարաբերություններ, գործում են առնվազն մեկ կիսամյակի ընթացքում: Այս խմբերի անդամները աջակցում են միմյանց, օգնում են և խրախուսում: Այն ներառում է բացակա ընկերներին աջակցելը, օգնել անցած նյութի յուրացման հարցում: Խմբերը անցկացնում են պաշտոնական հանդիպումներ, կատարում են քննարկումներ որոշում խմբի անդամի առաջադիմության չափը: Հենակետային խմբերն ունեն անձնական պաասխանատվություն՝ լսել և սատարել խմբի անդամներին: Որքան մեծ է դպրոցը և դասարանը այնքան ավելի կարևոր է հենակետային խմբեր ունենալն: Սովորաբար հենակետային համագործակցային խմբերը ուսուցչի կողմից ձևավորվում են նախապես խմբի անդամներին ուսումնասիրելուց հետո [1, էջ151]:

Հանրակրթական դպրոցում ֆորմալ, ոչ ֆորմալ և հենակետային խմբերի ձևավորումն ընդունելի է: Ուսուցիչն ինքն է որոշում, թե տվյալ թեմայի շրջանակներում ինչպիսի խմբեր կարելի է ձևավորել՝ կարևորելով ուսումնական նյութի առանձնահատկությունները, նպատակները, սովորողների

հետաքրքրությունների սահմանները, նրանց զարգացվածության աստիճանը, խմբում աշխատելու ցանկությունը և այլն:

Խմբում յուրաքանչյուր աշակերտի տրվում է որևէ դեր՝ առաջնորդ, ընդդիմախոս, նյութերի վերլուծաբան, փորձագետ, դիտորդ, կազմակերպիչ, օգնական, ժամանակը պահող և այլն: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների մտածողության զարգացմանը, նրանք սովորում են լսել, ընկալել և վերլուծել ուսումնական նյութը, ինքնուրույն որոշումներ կայացնել,ձևավորում է ինքնագնահատական,համագործակցություն, փոխօգնություն, կոնֆլիկտների, խնդիրների, համատեղ լուծման կարողություններ [2, էջ152]:

1.2 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Համագործակցային ուսուցումը հաջողված մեթոդ է,որի միջոցով գերազանց հաղորդակցություն է լինում սովորողների միջև և ստեղծվում է ակտիվ թիմային աշխատանք:ՈՒսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմաթիվ միջոցներին տիրապետելն է: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ՝ համագործակցային մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են՝ պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ուսանողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Համագործակցային մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում է հաղորդակցման

հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խմդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն) [3, էջ 163]: Համագործակցային մեթոդների անվանման հիմքը համագործակցել բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում՝ ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ է տալիս: Հետագայում ավելի տարածվեց ինտերակտիվ մեթոդներ բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ: Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է, մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները անվանում են խմբային:

Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկն այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշկերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարներ ու մեթեդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվումէ խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը և ապահովել ուսուցմնա էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար ստեղծել հաղորդակցական ազատ միջավայր, անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: Եվ կրթական գործընթացում ուսուցման համագործակցային մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառուների ժամանակ: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորություները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից:

Դպրոցի կարևոր խնդիր է հանդիսանում երեխաներինհաղորդակցության տարբեր ձևեր սովորեցնելը: Խմբային ուսուցման մեթոդի կիրառումը շատ արդյունավետ է տվյալ խնդիրը իրականացնելիս: Այս մեթոդների կիրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքների պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա [4, էջ 30]: Մեթոդների կիրառումը նպաստում է՝

- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,
- կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավմանը,
- ինքնագործունեության խթանմանը,
- ճանաչողական գործընթացների խթանմանը՝ խոսք, հիշողություն, մտածողություն,
- ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,
- ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը,
- աշակերտի անհատական հաղորդակցական – զգայական ոլորտի զարգացմանը,
- ուսումնական դրական խթանի զարգացմանը:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ,որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ:Համագործակցային ուսուցման մեթոդներն են՝ Աշակերտների թիմային առաջադիմություն, Խճանկար, Շրջագայություն պատկերասրահում, Երեք բանալի և մեկ կողպեք, Հինգրոպեանոց ազատ շարադրանք,պրիզմա, Ակվարիում, Կարուսելլ:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակել է Ռոբերտ Սլավինը: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը խթան է հանդիսանում ցածր առաջադիմություն ունեցող երեխաների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունավետության բարձրացման գործում:

Շրջագայություն պատկերասրահում: Սա <<**Խճանկար**>> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գազափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացմել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Խմբային հետազոտության մեթոդ: Խմբային հետազոտության մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները աշխատում են խմբերով մեկ թեմայի շուրջ: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխոգնության վրա: Խմբային հետազոտության մեթոդի հեղինակը պրոֆեսոր Շարոնն է, սակայն այս մեթոդի ակունքները հանդիպում են Ջոն Դյուիի տեսության մեջ: Այս մեթոդը կիրառելիս աշակերտները սովորում են համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրը: Աշակերտները խորությամբ են յուրացնում տրված նյութի բովանդակությունը և սովորում են համագործակցել հետազոտելու ընթացքում:Այսպիսով աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգանում է համագործակցային աշխատանքի հմտությունները:

Ակվարիում: Կազմվում են 4-5 սովորողներով համալրված խմբեր: Խմբերից մեկը տեղավորվում է դասարանի կենտրոնում, ստանում առաջադրանքը և սկսում քննարկել, վերլուծել: Մնացած մասնակիցները չեն խանգարում և չեն մոտենում կենտրոնին, այլ ուշադիր լսում են նրանց քննարկումները, անհրաժեշտության դեպքում որոշ նշումներ անում: Տրված ժամանակի ավարտից հետո կենտրոնում (ակվարիում) գտնվող խումբը ներկայացնում է առաջադրանքը և միանում մյուս մասնակիցներին: Ամբողջ դասարանը քննարկում է, բանավիճում է: Որից հետո «ակվարիում» է գալիս հաջորդ խումբը:

ԳԼՈՒԽ II. ՍՈՑՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԱՄՓՈՓՈՒՄ

2.1 Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի իրականացումը դպրոցում

Համագործակցային ուսուցման ներդրումը իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում:Հայաստանում, ինչպես աշխարհում ակնհայտ է,որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժաշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Աշխատանքի նպատակն է նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն: Այստեղ ներկայացված են համագործակցային մի քանի մեթոդներ: Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս[10,էջ175]: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներց մեկն է: Շատ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերը իրենց դասավանդման ընթացքում կիրառում են խմբային աշխատանքը, սակայն ոչ բոլորն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները կիրառելու համար անհրաժեշտ վարպետություն: Այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ

են, քան համագործակցային ուսուցում: Ըստ Ս. Խաչատրյանի, ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու համար[7,էջ18]:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Դասարանում համագործակցային խմբերով աշխատանքը մեծ առավելություններ ունի: Այն գործուն և արդյունավետ ուսումնառության հնարավորություն է ընձեռում: Պատկերացրեք մի դասարան, ուր աշակերտները զարգացնում են իրենց ուսումնական հմտությունները և ընդլայնում ըմբռնումները՝ զանազան իրական հանգամանքներում մասնակից դառնալով իրենց հետաքրքրություններն ու երևակայությունը խթանող կոնկրետ գործնական աշխատանքների: Նրանք անհատապես և խմբերով կարծիքներ են փոխանակում, կազմում հանձնարարականների ցանկեր, գրում հայտարարությունների տեքստեր, հետազոտություններից ստացված տվյալների հավաքում, նախապատրաստվում ելույթների և այլն: Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է: Բազմաթիվ խելացի և ստեղծագործական ներուժ ունեցող երեխաներ այդպես էլ չեն հասնում հաջողության, քանի որ գործնական մտածողություն չեն զարգացնում: Նրանք լավ են սովորում դպրոցում և հաջողությամբ են հանձնում ստուգողականներն ու քննությունները: Սակայն չեն սովորում, թե ինչպես պետք է փոխհարաբերվել

ուրիշների հետ, կամ ինչպես ուրիշի աչքերով նայել առարկաներին ու երևույթներին և իրենք իրենց: Ուստի պետք է հատուկ ուշադրություն դարձնել, այս հիմնահարցերին, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումը աշակերտներին հնարավորություն է տալիս առավել հեշտությամբ հարմարվել կյանքի պահանջներին:Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի,սակայն կա համագործակցային մի քանի եղանակ,և ավելին ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ:

Գոյություն ունի աշակերտների՝ համագործակցելու ցանկությանը նպաստելու և այն պահպանելու երեք եղանակ՝

- <<համայնքի>> ձևավորում,
- համագործակցային առաջադրանքներ,
- խրախուսման և գնահատման համակարգի կիրառում:

2. **Համագործակցելու պատրաստակամությունը**

Շփվելու հմտությունները զարգացնելու համար կարելի է օգտագործվել մի շարք վարժություններ.

- մոդելավորող ուսումնական խումբ,
- համատեղ մեկնաբանություն,
- դերախաղ
- դիտարկում
- փոխօգնություն
- պարտականությունների որոշում/բաշխում

3. Համագործակցային ուսուցման հիմնական սկզբունքները.

Եթե հետևյալ բոլոր սկզբունքները չեն պահպանվում, համագործակցային ուսումը տեղի չի ունենում: Չորս հիմնական սկզբունքները(Սպենսեր Կագանի համաձայն)՝[11,էջ13]

ա) Զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ՝ ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ: Այսպիսով, յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլիներ ավանդական եղանակով ուսուցման դեպքում:

բ)Անձնական պատասխանատվություն՝ աշակերտներից յուրաքանչյուրը պետք

է ավարտի աշխատանքի իր բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին: դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կոնկրետ մասի համար:

գ)Կառուցողական փոխկախվածություն՝ անհատական զարգացումն ու խմբի զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտի զարգացման համար պահանջվում է դասընկերների զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն: դ)Հավասարաչափ մասնակցություն՝ աշակերտները մասնակցում են աշխատանքին ըստ իրենց ընդունակությունների: Այս նպատակին հնարավոր է հասնել աշխատանքի բաշխման և առաջադրանքներ հանձնարարելու միջոցով:

4. Եղանակներ

Ուսուցման համագործակցային եղանակներից յուրաքանչյուրն իր կիրառությունն ունի, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կարող է կիրառվել տարբեր իրավիճակներում: Ուսուցման եղանակն ընտրելիս պետք է հաշվի առնել՝

- աշխատանքի համար հատկացված ժամանակը
- վարժությունների տեսակները
- դասերի տեսակները
- բովադակությունը
- փոխկախվածության աստիճանը:

Հարցաթերթիկի միջոցով փորձել ենք պարզել,թե՝



Դիագրամ 1



Դիագրամ 2



Դիագրամ 3



Դիագրամ 4



Դիագրամ 5



Դիագրամ 6



Դիագրամ 7



Կատարված աշխատանքից հետո կատարեցինք վերլուծություն և եկանք այն եզրահանգման, որ ավանդական մոտեցումները իրենց սպառել են՝ (49%) այո, (51%) ոչ(տես դիագրամ 1), համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձացման՝ (66%) այո, (34%) ոչ(տես դիագրամ 2): Ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի համար անհրաժեշտ է մասնագիտական վերապատրաստում, հարցված մասնակիցների (66%)-ը պատասխանել է այո , իսկ (34%) –ը ոչ
(տես դիագրամ 3): Ուսումնական համագործակցությունը նպաստում է միջին դպրոցականի քննադատական մտածողության, հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, (57%) այո, (43%) ոչ(տես դիագրամ 4): Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ստեղծագործակցական կարողությունների զարգացմանը (60%) այո, իսկ (40%) ոչ(տես դիագրամ 5): Համագործակցային ուսուցումը միջառարկայական կապերի ապահովման պայման կարող է հանդիսանալ (49%) այո, իսկ (51%) ոչ(տես դիագրամ 6): Նյութական ռեսուրսները բավարարում են համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի իրականացման համար (40%) այո, իսկ (60%) ոչ(տես դիագրամ 7), միջին դպրոցականներին հետաքրքրում են նոր մեթոդները, խմբային աշխատանքները մեծամասնությունը պատասխանել է այո (63%), ոչ (37%)(տես դիագրամ 8): Իսկ հնարավոր է ամբոջովին հրաժարվել վերարտադրողական մեթոդներից և անցնել փոխներգործուն մեթոդների ՝ (49%) այո, (51%) ոչ(տես դիագրամ 9):

Լրացված հարցաթերթիկներից պարզ դարձավ, որ ուսուցիչներից շատերը չեն պատկերացնում համագործակցային տեխնոլոգիաների կիրառման շղթան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր դիտարկումների ընթացքում հանգեցինք այն եզրակացության, որ համագործակցային տեխնոլոգիան սովորողների ինքնուրույնության, համագործակցային կարողությունների ձևավորման լավագույն ձևն է: Միասին աշխատելով աշակերտները կարող են համատեղ նպատակների հասնել: Այն ապահովում է սովորողների ճանաչողական գործընթացների(խոսք, հիշողություն,մտածողություն) և սովորողների անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացմանը:

- Ուսումնասիրելով և վերլուծելով համապատասխան գրականությունը,եկանք այն համոզման, որ համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը դպրոցում նպաստում է դպրոցականների անձի սոցիալականացմանը և ինտեգրմանը հասարակության մեջ:
- Ուսումնասիրությունների արդյունքում վերլուծված են համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ, որոնք առավել արդյունավետ, հետաքրքիր են դարձնում ուսուցման գործընթացը:
- Իրականացրած հարցումների արդյունքում բացահայտեցինք, որ համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդում, այլև խթանում է սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական կարողությունների, դպրոցականի քննադատական մտածողության զարգացումը:
- Մեր կողմից մշակված դասերի նմուշօրինակները համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառմամբ միտված են ուսուցման գործընթացի բարելավմանը, սովորողների համագործակցային, երկխոսական կարողությունների ձևավորմանը: Մեր հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ համագործակցային ուսուցումը սովորելու անհատական ոճ է, սովորողների ինքնակատարելագործման և դրդապատճառների իրականացման լավագույն ձև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ.,Վարդումյան Ս., Արնաուդյան Ա., Օհանովա Ի.,Պետրոսյան Ռ., Երեմյան Լ.,<< Ուսումնառությունն ու դասավանդումը հանրակրթական դպրոցում>>(ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան, հրատ. <<Այրեքս>> 2001, էջ 319:
2. Արնաուդյան Ա., Օհանովա Ի.,Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., << Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները>> (ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան, հրատ. <<Տիգրան Մեծ>>2005, էջ335:
3. Գյուլամիրյան Ջ., <<Մայրենիի ուսուցման մեթոդիկա>>, Երևան, Զանգակ,2015, էջ 314:
4. Գարդներ Հ, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում: Ձեռնարկ դպրոցի ուսուցչի համար:- Եր.: 2001 էջ288:
5. Խաչատրյան Ս.Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխա- տանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախա- շավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ», 64 էջ:
6. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, <<Անտարես>> հրատ., 2006,էջ 117:
7. Վարդումյան Ս., Ջաղինյան., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, <<Նայյան տապան>> հրատ., 2005, էջ 402:
8. Վինցե Սաբո, Ադամ Մերենյի Աթիլլա Տակաչ , <<101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար>>, Բուդապեշտ, 2006:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Առարկան՝ Մայրենի

Դասարանը՝ 6-րդ

Բաժինը՝ Հայրենի բնաշխարհ

Թեմաները՝ Ա/ Ավ. Իսահակյան <<Արագածին>>

Գեղարվեստական և գիտական խոսք

Նպատակները՝

1. առարկայական/ ակադեմիական/

Աշակերտը կսովորի և կիմանա՝

- տեղեկություններ Ավ. Իսահակյանի կյանքի և գործի մասին
- բանաստեղծության գաղափարական բովանդակությունը
- շրջակա աշխարհի մասին /Արագած լեռը/
- գեղարվեստական խոսքի լեզվաոճական առանձնահատկությունները
- գիտական խոսքի լեզվաոճական առանձնահատկությունները

Աշակերտը կկարողանա

- պատմել Ավ. Իսահակյանի մասին
- բանավոր և գրավոր խոսք կազմել

2. ընդհանուր զարգացում

- երևակայության, պատկերավոր մտածողության զարգացում

Ուսումնական նյութեր՝ Ավ. Իսահակյանի դիմանկարը, Արագած լեռը պատկերող սահիկներ, Մարտիրոս Սարյանի կտավներից, երաժշտություն։

Կիրառվող մեթոդներ՝ <<Դասախոսություն>>, դերային խաղ։

Նախապատրաստական աշխատանք. նախօրոք դասարանը բաժանվում է խմբերի՝ զեկուցողներ, գրականագիտական տեղեկություններ հաղորդողներ, 3-րդ խումբը կներկայացնի Ստ. Կուրտիկյանի <<Արագածի չորս կատարները>> ավանդազրույցը՝ դերային խաղի միջոցով՝, 4-րդ խումբը պետք է պատրաստվի Ավ. Իսահակյանի <<Արագածին>> բանաստեղծության վերլուծությանը։

Դասի ընթացքը

Խթանում

Դասարանում փակված են աշակերտների՝ Արագածի նկարազարդումներից, Ավ. Իսահակյանի դիմանկարը։

Վերջում տալիս եմ հարցեր

Դուք ներկայացրեցիք Արագած լեռը գիտական և գեղարվեստական խոսքի միջոցով, լսեցիք երգ, դիտեցիք նկարչի ստեղծագործություն։

Դուք ինչպե՞ս, ի՞նչ միջոց կընտրեք Արագածը նկարագրելու համար։

Վերջում տրվում է անհատական տնային հանձնարարություն. գրել գիտական կամ գեղարվեստական շարադրանք՝ <<Արագած>>, <<Արագածին>> բանաստեղծության նկարազարդում։

Դասի պլան

Դասարան՝ 7-րդ **Առարկան՝** Գրականություն	
Թեմա	**Վահան Թոթովենց։ Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը**
Նպատակ	1. Ձևավորել գիտելիքներ Թոթովենցի կենսագրության և ստեղծագործության մասին, 2. Պատկերացում տալ գրողի ապրած ժամանակաշրջանի և նրա մարդկային նկարագրի մասին
Վերջնարդյունք	Կարողանա՝ 1. Վերարտադրել գրողի կենսագրությունը, ապրած ժամանակաշրջանը, քարտեզագրել երկրային ուղին, (Հ1. վերլուծի և ընկալի գրական հայերեն տեքստեր) 2. Ուրվագծել գրողի կերպարը պատմական ժամանակաշրջանի համայնապատկերին, կատարել եզրահանգումներ, արտահայտել դիրքորոշում, (Հ29. վերլուծի ու ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ)
Խնդիրներ	1. Առանձնացնել գրողի կյանքի ուշագրավ փաստերը, քարտեզագրել, նրա պատմվածքների սցենարներով նկարահանված ֆիլմերից հատվածներ դիտել և քննարկել, 2. Մեկնաբանել պատմական ժամանակաշրջան- գրողի մարդկային նկարագիր փոխազդեցությունը,կանխատեսել գրողի ճակատագիրը այլ ժամանակաշրջանում, 3. Ստեղծել բանավոր կամ գրավոր երկխոսություն գրողի հետ նրա որևէ տարիքում, ընտրել համապատասխան մեղեդի։
Անդրադարձ	Բարոյական ի՞նչ դասեր քաղեցինք։
Տնային աշխատանք	Սահիկաշարի ստեղծում՝ կենսագրությունն ամփոփող և ֆիլմերի հատվածներով համեմված։
Միջառարկայական կապեր	Հայոց լեզու, պատմություն, կինոարվեստ, երաժշտություն։
Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	Ժամանակ և տարածություն, անհատներ և հարաբերություններ, պատճառ և հետևանք, անհատական և մշակութային արժեհամակարգ։

Թեմա	**Վ. Թոթովենցի <<Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա>>վեպից հատված. բովանդակությունը և դիպաշարը**
Նպատակ	1. Գաղափար տալ տեքստում պատկերված ինքնակենսագրական պատումի, կորուսյալ հայրենիքի, հուշի, հայրենի ավանդույթների մասին, ընդհանուր պատկերացում տալ դիպաշարի մասերի վերաբերյալ, 2. Նպաստել հատվածները ստեղծագործաբար և պատկերավոր ներկայացնելուն, սեփական կենսագրական պատում ստեղծելուն
Վերջնարդյունք	Կարողանա՝ 1. Բացահայտել տեքստի գլխավոր գաղափարը, ներկայացնել դիպաշարի մասերը՝ ըստ տվյալ հատվածի, (Հ1. վերլուծի և ընկալի հայերեն գրական տեքստեր), 2. Հատվածները ներկայացնել տարբեր կերպարների անունից, ստեղծագործական հավելումներ անել, (Հ31. արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական դիրքորոշումը), 3. Ստեղծել սեփական ինքնակենսագրության պատառիկներ (տնային աշխատանք) (Հ42. դրսևորի ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողություններ և հմտություններ),
Խնդիրներ	1.Ընդհանրություններ գտնել վերնագրի և բնագրի միջև, առանձնացնել հիմնական գաղափարն արտահայտող հատվածները և վերնագրել 2. Նշել դիպաշարի մասերի բնութագրիչ հատկանիշները, գտնել դրանք տվյալ հատվածում, 3. Բանավոր կամ գրավոր որևէ կերպարի (նաև անշունչ առարկայի) անունից ներկայացնել տվյալ հատվածը այլ վերջաբանով՝ կատարելով նկարագրդումներ, հիշել համապատասխան երգ:
Անդրադարձ	Որտե՞ղ և ինչպե՞ս կկիրառենք սովորածը:
Տնային աշխատանք	Ստեղծել ինքնակենսագրական պատումի պատառիկներ:
Միջառարկայական կապեր	Հայոց լեզու, կերպարվեստ, երաժշտութ- Յուն:
Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	Անհատներ և հարաբերություններ, ժամանակ և տարածություն, պատճառ և հետևանք:
Թեմա	**Վահան Թոթովենցի <<Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա>> վեպի (հատվածի) կերպարները**
Նպատակ	1. Ձևավորել գիտելիքներ կերպարի վերլուծության,

	բնավորությունն ու վարքագիծը համեմատելու վերաբերյալ, 2. Պատկերացում տալ կերպարի վրա ապրած ժամանակաշրջանի ազդեցության մասին, նպաստել կերպարները ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մեկնաբանելուն
Վերջնարդյունք	Կարողանա՝ 1. Մատնանշել գրական կերպարի դերը, կերպարակերտման առանձնահատկությունները, (Հ7. գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ), 2. Բացատրել, թե ինչպիսին է ժամանակաշրջանի ազդեցությունը կերպարի վրա, ինքնուրույն ստեղծել կերպարներ, (Հ12. կիրառի տեքստային և գրաֆիկական խմբագրիչներ, կարողանա մշակել տվյալներ),
Խնդիրներ	1. Առանձնացնի կերպարների արտաքինը նկարագրող, բնավորության գծերը բացահայտող պատկերները, համեմատի իր հարազատների հետ, շեշտադրի ընդհանրությունները, 2. Հորինի կերպարների բնավորությունն արտահայտող խորհրդանիշներ կամ նկարի նրանց (տնային աշխատանք՝ առցանց գործիքով ստեղծել խաղ), 3. Տրված հատկանիշները համապատասխանեցնի կերպարներին, բացահայտի ժամանակաշրջանի ազդեցությունը, հիմնավորի օրինակներով:
Անդրադարձ	Ի՞նչը կփոխեի որևէ կերպարի վարքագծում: Ի՞նչը կփոխեմ իմ վարքագծում:
Միջառարկայական կապեր	Հայոց լեզու, թվային գրագիտություն, կերպարվեստ, հասարակագիտություն
Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	Պատճառ և հետևանք, անհատներ և հարաբերություններ, ժամանակ և տարա- ծություն:

Դասարան՝ 7-րդ **Առարկա՝** Գրականություն	
Թեմա	**Ստեփան Զորյան. Կենսագրություն**
Նպատակ	• Պատկերացում տալ հեղինակի կյանքի մասին: • Ձևավորել գիտելիք Ստեփան Զորյանի կյանքի և ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ:
Վերջնարդյունքներ	• Հուշերի միջոցով ստեղծել Զորյանի կերպարը և

	բնութագրել նրան: *(Հ25) գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ.)* • Փաստեր հավաքել և ներկայացնել Զորյանի ապրած ժամանակաշրջանը և ազդեցությունը ստեղծագործությունների վրա: (*Հ29) ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.)* • Համեմատել հեղինակի ապրած ժամանակաշրջանը ներկայի հետ: (*Հ30) գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ.)*
Խնդիրներ	• Կատարել հեղինակի՝ տարբեր տարիների լուսանկարների վերլուծություն:/թվային և մեդիա կարողունակություն • Կազմել ցուցակ/ սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության, ապրած ժամանակաշջանի ուշագրավ փաստերը և կապը ներկայի հետ:(տնային): /անհատներ և հարաբերություններ • Կատարել Զորյանի ստեղծագործությունների իմաստային և գաղափարական ընդհանրացում: / պատճառ և հետևանք
Թեմա	**«Մի կյանքի պատմություն» Դաս. 1**
Նպատակ	• Պատկերացում տալ «Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական պատումի, հուշի, սյուժեի մասին: • Զարգացնել ճանաչողական ունակությունները(տարատեսակ կերպարները, ժամանակաշրջանը, տեքստի գեղագիտությունը):
Վերջնարդյունք	• Կարողանա մտքերն անկաշկանդ շարադրել և ներկայացնել ստեղծագործության մեջ առկա պատկերավորման միջոցները: *(Հ31) արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.)* • Կարողանա ցույց տալ դեպքերի հաջորդական ընթացքը և բացահայտել գրական կերպարի զարգացումը: *(Հ32) արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.)*

	• Կարողանա ճանաչել և առանձնացնել ստեղծագործության որևէ հատվածի կերպարներին: *(Հ41) ցուցաբերի հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն.)*
Խնդիրներ	• Դուրս գրել անծանոթ բառերը, իմաստը ճշտելով՝ ներկայացնել դասարանին, ընդգծել գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները: /կառուցվածք և գործառույթ • Կարողանա ցույց տալ գրական կերպարի զարգացումը՝ համեմատելով սեփական և ծնողների կյանքի հետ: /անհատներ և հարաբերություններ • Համեմատել կարդացած ինքնակենսագրական վեպերի հատվածները(«Սիլեհտարի պարտեզներ», «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա», «Մի կյանքի պատմություն»), ցույց տալ նմանությունները և տարբերությունները /կառուցվածք և գործառույթ • Ներկայացնել հեղինակի ընտանիքը և համեմատել իր ընտանիքի հետ: /կայունություն և փոփոխություն
Թեմա	**«Մի կյանքի պատմություն» դաս. 2**
Նպատակ	• Ձևավորել գիտելիք «Մի կյանքի պատմություն» ստեղծագործության ընտրված հատվածի վերաբերյալ: • Զարգացնել աշակերտի լեզվական, վերլուծական և դատողական ունակությունները:
Վերջնարդյունք	• Բացատրի տեքստի գլխավոր ասելիքը, գաղափարը: *(Հ1) վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը)* • Բացատրի գրական կոնֆլիկտը (բախումը): *(Հ35) բացատրի կոնֆլիկտների ազդեցությունը միջանձնային և միջխմբային հարաբերությունների վրա, կիրառի կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբեր ձևեր ըստ անհրաժեշտության.)* • Կանխատեսի դիպաշարի զարգացումը՝ հիմնվելով առկա փաստերի վրա: *(Հ36) կարողանա հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, հակումները, ընդունել սեփական յուրահատկությունները.)*
Խնդիրներ	• Կարողանա բացատրել տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը, ցույց տա գլխավոր գաղափարն

	արտահայտող բանալի բառը, նախադասությունը, միտքը, հիմնավորի գրավոր և բանավոր խոսքով: /լեզվական գրագիտություն և կարողություն • Կյանքից և գրականությունից առանձնացնել դեպքեր, որոնք կոնֆլիկտի առաջացման պատճառ կարող են լինել: / պատճառ և հետևանք • Տեքստից ելնելով կազմել հարցեր և պատասխանել հարցերին՝ փորձելով բացատրել տեքստի գլխավոր գաղափարը: /լեզվական գրագիտություն և կարողություն • Ստեղծագործության համար հորինել ավարտ: (տնային) /փոփոխություն և զարգացում

Դասարան՝ 7-րդ	
Թեման	**Գուրգեն Մահարի: Կենսագրություն**
Նպատակները	1. **պատկերացում տալ** տեքստում պատկերված ինքնակենսագրական պատումի, հուշի, գրողի և իր կյանքի անմիջական պատկերման մասին: (Հ43 - ճանաչի ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտի իր գաղափարները և հույզերը) 2. **ձևավորել** գիտելիքներ հեղինակի կյանքի, տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ազդեցության մասին:
Վերջնարդյունքներ	1. **վերարտադրի** գրողի կենսագրությունը, ապրած ժամանակաշրջանը, (Հ29 - 2. **բացատրի՝** ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը: (Հ29- ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ)
Խնդիրները	➢ **ստեղծի** սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության, ապրած դարաշրջանի ուշագրավ փաստերը, ➢ **ընդգծի** գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները, ➢ **գտնի** լրացուցիչ նյութեր տվյալ ժամանակարջանի և աշխարհագրական վայրի մասին:
Թեմա	**Գուրգեն Մահարի «Մանկություն» հատված (սյուժեն, գաղափարը)**
Նպատակ	1. պատկերացում տալ տեքստում պատկերված

	ինքնակենսագրական պատումի, հուշի, գրողի և իր կյանքի անմիջական պատկերման մասին, 2. նպաստել ստացած գիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով բանավոր/գրավոր կերպով վերարտադրելուն
Վերջնարդյունք	1. բանավոր և գրավոր պատմի սեփական կյանքից հետաքրքիր դեպքեր: Հ2-հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք **2.** բանավոր և գրավոր **պատմի** սեփական կյանքից հետաքրքիր դեպքեր: Հ31- Կյանքից և գրականությունից **առանձնացնի** կոնֆլիկտի տարբեր ձևեր:
Խնդիրներ	✓ բնութագրի գործողությունների զարգացման կենտրոնում գտնվող հերոսներին, ✓ ցույց տա այն փաստերը, որոնք ցույց են տալիս, որ գրողն իր մանկությունն անց է կացրել Վան քաղաքում, ✓ համեմատի Մահարու մանկությունը աշակերտի մանկության հետ գնահատի տատի դերը Մահարու կյանքում:
Գնահատում	Ձևավորող
Անդրադարձ	Համեմատի Գուրգեն Մահարու տատին և իր տատին, ինչո՞վ են նման և տարբեր նրանք: Առանձնացնի առավել կարևոր փաստերը և հիմնավորի
Թեմա	**Գուրգեն Մահարի «Մանկություն» հատված (կերպարները)**
Նպատակ	• ձևավորել գիտելիքներ կերպարների մասին, • նպաստել ստացած գիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով բանավոր/գրավոր կերպով վերարտադրելուն
Վերջնարդյունք	• մատնանշի գրական-գեղարվեստական կերպարի դերը, կերպարակերտման առանձնահատկությունները տեքստում (Հ29 - ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ) • բանավոր/գրավոր ձևով բնութագրի իր հարազատներից մեկին/մի քանիսին (Հ31 - արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը)
Խնդիրներ	✓ ցույց տա գրողի կողմից օգտագործված բառապաշարը, որը բնութագրում է կերպարին/կերպարներին, ✓ մատնանշի, թե ինչ փոխհարաբերության մեջ է կերպարը մյուս գործող անձանց հետ, գրի խորհուրդ կամ կարծիք հերոսներից որևէ մեկին:
Գնահատում	Ձևավորող

Անդրադարձ	հետաքրքիր էր	հասկացա, որ	